ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ք. Երևան «29» 03 2022թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 72-Լ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 698-Ն ՈՐՈՇՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3-րդ և 14-րդ կետերի, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 749-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով և հաշվի առնելով Կադաստրի կոմիտեի գեոմատիկայի կենտրոնի պետի՝ 2022 թվականի մարտի 4-ի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) գեոմատիկայի կենտրոնի պետին՝ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման N 2 հավելվածի շրջանակներում իրականացված ՀՀ Շիրակի մարզի՝

1) Ախուրյան խոշորացված համայնքի՝ Ազատան, Ախուրիկ, Ախուրյան, Այգաբաց, Առափի, Արևիկ, Բայանդուր, Բասեն, Բենիամին, Գետք, Երազգավորս, Լեռնուտ, Կամո, Կապս, Կառնուտ, Կարմրաքար, Հայկավան, Հացիկ, Հովիտ, Հովունի, Ղարիբջանյան, Մայիսյան, Մարմաշեն, Մեծ Սարիար, Շիրակ, Ոսկեհասկ, Ջաջուռ, Ջաջուռավան, Ջրառատ, Վահրամաբերդ, Փոքրաշեն, Քեթի բնակավայրերի,

2) Արթիկ խոշորացված համայնքի Անուշավան, Արևշատ, Արթիկ, Գեղանիստ, Գետափ, Լեռնակերտ, Լուսակերտ, Հայկասար, Հայրենյաց, Հառիճ, Հոռոմ, Հովտաշեն, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նահապետավան, Նոր Կյանք, Պեմզաշեն, Սարալանջ, Սարատակ, Սպանդարյան, Վարդաքար, Տուֆաշեն, Փանիկ, Փոքր Մանթաշ բնակավայրերի ուղղված կադաստրային քարտեզները փոխանցել կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին:

2. Կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի պետին՝ ուղղված կադաստրային քարտեզները ներմուծել առցանց միջավայր և այդ մասին գրավոր հայտնել Կոմիտեի Շիարկի մարզային ստորաբաժանման ղեկավարին:

3. Կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավարին՝ սույն թվականի մարտի 29-ից սկսած սույն հրամանի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված համայնքների կադաստրային քարտեզների վարումն առցանց միջավայրում իրականացնել ուղղված կադաստրային քարտեզներով:

4. Կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավարին՝ վերլուծել Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (ARPIS) առկա, սակայն կադաստրային քարտեզներում չարտացոլված անշարժ գույքի միավորների վերաբերյալ տեղեկատվությունը և հնարավորության դեպքում իրականացնել համապատասխան ուղղումներ, իսկ նույնականացման անհնարինության դեպքում այդ մասին զեկուցագիր ներկայացնել կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչություն:

Recoverable Signature

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393